# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# 2019

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 5

| | |
|---|---|
| Խմբի համարը | |
| Նստարանի համարը | |

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

1 Ե՞րբ է տրոհվել Խեթական պետությունը.

1) Ք.ա. XIV դարի սկզբներին
2) Ք.ա. XII դարի սկզբներին
3) Ք.ա. X դարի սկզբներին
4) Ք.ա. IX դարի սկզբներին

2 Ե՞րբ է Քլոդվիգն ընդունել քրիստոնեություն.

1) 479 թ.
2) 486 թ.
3) 496 թ.
4) 500 թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Չուդ լճի ճակատամարտը.

1) 1240 թ.
2) 1242 թ.
3) 1243 թ.
4) 1244 թ.

4 Ե՞րբ է Սահմանադիր ժողովը հաստատել Ֆրանսիայի առաջին սահմանադրությունը.

1) 1789 թ.
2) 1791 թ.
3) 1792 թ.
4) 1895 թ.

5 Ե՞րբ են Իտալիան և Վատիկանը միմյանց ճանաչել իբրև սուվերեն պետություններ.

1) 1920 թ.
2) 1922 թ.
3) 1929 թ.
4) 1933 թ.

6 Ե՞րբ է ֆաշիզմի առաջնորդ Մուսոլինին հիմնել «Ֆաշի դի կոմբատիմենտո» («Մարտական միություն» կազմակերպությունը).

1) 1919 թ.
2) 1920 թ.
3) 1921 թ.
4) 1922 թ.

7 Ե՞րբ է ԳԺՀ-ի ղեկավարությունը ԽՍՀՄ-ի դրդմամբ կառուցել Բեռլինի պատը.

1) 1949 թ.
2) 1956 թ.
3) 1961 թ.
4) 1966 թ.

**8** **Ո՞վ է Զևսի հայրը հունական դիցարանում.**

1) Կրատերոսը
2) Ուրանոսը
3) Սատուրնոսը
4) Քրոնոսը

**9** **Ու՞ր հեռացան վեստգոթերը Ալարիխի մահից հետո.**

1) Թրակիա
2) Բրիտանիա
3) Գալլիա
4) Փոքր Ասիա

**10** **Ո՞վ է Իրանում Ղաջարների թյուրքական ցեղի հարստության հիմնադիրը.**

1) Աղա Մոհամմադը
2) Ալի Մուհամմեդը
3) Ռեզա խանը
4) Մուհամմադ Խիաբանին

**11** **Ո՞ւմ կողմից է ձևակերպվել «արտաքին ինքնորոշման» սկզբունքը.**

1) Ու. Չերչիլի
2) Վ. Վիլսոնի
3) Մ. Խաթամիի
4) Ս. Հանթինգտոնի

**12** **Քանի՞ տարի ժամկետով է նշանակվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը.**

1) 3
2) 4
3) 5
4) 6

**13** **Ո՞րտեղ է առաջին անգամ հնչել «ազգերի ինքնորոշում» հասկացությունը.**

1) Լոնդոնի խորհրդաժողովում
2) Վաշինգտոնի խորհրդաժողովում
3) Փարիզի խորհրդաժողովում
4) Բեռլինի խորհրդաժողովում

**14** **Ի՞նչ անունով է հայտնի Ուկրաինայում տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունը».**

1) «Նարնջագույն հեղափոխություն»
2) «Վարդերի հեղափոխություն»
3) «Կակաչների հեղափոխություն»
4) «Սպիտակ հեղափոխություն»

**15** **Ի՞նչ է նշանակում վասիլևս (բասիլևս).**

1) քարտուղար
2) պատրիարք
3) առաքյալ
4) կայսր

16 **Ի՞նչ էին կոչվում Մերովինգների դինաստիայի վերջին թագավորները.**

1) «ծույլ թագավորներ»
2) «թույլ թագավորներ»
3) «վախկոտ թագավորներ»
4) «անտարբեր թագավորներ»

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ասորեստանի հզորացումը Աշուրնածիրպալ II-ի օրոք
բ. Ասորեստանի տարածքի կրկնապատկումը Թիգլաթպալասար III-ի օրոք
գ. Սարգոն II-ի խոշոր արշավանքը դեպի Ուրարտու
դ. Նաբոպալասարի թագադրումը որպես Բաբելոնիայի արքա
ե. Սամարիայի գրավումը Սարգոն II-ի կողմից

1) ա, բ, ե, գ, դ
2) բ, ա, ե, գ, դ
3) ա, գ, ե, դ, բ
4) դ, ա, բ, գ, ե

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մուհամմեդի փախուստը Յաթրիբ
բ. Արաբների կողմից գրեթե ողջ Իրանի նվաճման ավարտը
գ. Օմայան արքայատոհմի գահակալման սկիզբը
դ. Աբասյան արքայատոհմի գահակալման ավարտը

1) գ, ա, բ, դ
2) ա, բ, դ, գ
3) ա, գ, բ, դ
4) ա, բ, գ, դ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գերմանացիների առաջին հաղթանակը հունգարների դեմ
բ. Լյուդովիկոս Բարեպաշտի կողմից կայսրության բաժանումը իր որդիների միջև
գ. Գերմանական (Տևտոնական) թագավորության ստեղծումը
դ. Օտտոն I-ի առաջին արշավանքը Իտալիա
ե. Հենրիխ IV կայսրի և Գրիգորիս VII պապի հանդիպումը Կանոսա ամրոցում

1) ա, բ, դ, ե, գ
2) գ, բ, ա, դ, ե
3) բ, գ, ա, դ, ե
4) ա, գ, ե, բ, դ

**20** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Արտակարգ իրադրության պետական կոմիտեի (ԱԻՊԿ) կողմից երկրի կառավարման ստանձնումը
բ. ԽՍՀՄ-ի պահպանման անհրաժեշտության վերաբերյալ հանրաքվեի անցկացումը
գ. Մ. Գորբաչովի հրաժարականը
դ. Ռուսաստանի պետական ինքնիշխանության մասին հռչակագրի ընդունումը

1) բ, ա, գ, դ
2) դ, բ, ա, գ
3) բ, գ, դ, ա
4) դ, ա, բ, գ

**21** Ե՞րբ է գահակալել Ռամզես II-ը.

1) Ք.ա. 1540-1517 թթ.
2) Ք.ա. 1468-1434 թթ.
3) Ք.ա. 1352-1336 թթ.
4) Ք.ա. 1279-1213 թթ.

**22** Ե՞րբ է Գերմանիայում ավարտվել Կարոլինգյան արքայատան գահակալման շրջանը.

1) 911 թ.
2) 919 թ.
3) 923 թ.
4) 937 թ.

**23** Ե՞րբ է Բյուզանդիայում կառավարել Մակեդոնական (Հայկական) արքայատոհմը.

1) 867 - 1056 թթ.
2) 871 - 1025 թթ.
3) 876 - 1051 թթ.
4) 878 – 1048 թթ.

**24** Ե՞րբ է Ռուսաստանի դաշնությունը ճանաչել Հարավային Օսիայի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել վերջինիս հետ.

1) 2005 թ.
2) 2006 թ.
3) 2008 թ.
4) 2010 թ.

**25** Ե՞րբ է ԽՍՀՄ Պետական խորհուրդը հաստատել ԽՍՀՄ-ի փոխարեն Ինքնիշխան պետությունների միության (ԻՊՄ) ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը.

1) 1991 թ. օգոստոսի 22-ին
2) 1991 թ. սեպտեմբերի 24-ին
3) 1991 թ. հոկտեմբերի 26-ին
4) 1991 թ. նոյեմբերի 25-ին

**26** **Ո՞ր աշխատության հեղինակն է Իսիդոր Սևիլացին.**

1) «Գոթերի պատմությունը»
2) «Գոթերի, վանդալների և սվևների պատմությունը»
3) «Ֆրանկների պատմությունը»
4) «Երգ Ռոլանդի մասին»

**27** **Ո՞ր ճակատամարտում օգտագործված քիմիական զենքը 5000 զինվորի մահվան պատճառ հանդիսացավ.**

1) Իպր քաղաքի
2) Մառն գետի
3) Սոմ գետի
4) Լուվեն քաղաքի

**28** **Ո՞ր խորհրդաժողովում որոշվեց Եվրոպայում երկրորդ ճակատը բացել Ֆրանսիայի հյուսիսում.**

1) Մոսկվայի խորհրդաժողովում
2) Յալթայի խորհրդաժողովում
3) Թեհրանի խորհրդաժողովում
4) Պոտսդամի խորհրդաժողովում

**29** **ԱՄՆ-ի ո՞ր նախագահն է առաջ քաշել «նոր սահմանագծերի կարգախոսը».**

1) Ռ. Նիքսոնը
2) Ջ. Քենեդին
3) Հ. Թրումանը
4) Ռ. Ռեյգանը

**30** **Ո՞րն երկիրն է ԱՊՀ-ի ոչ լիիրավ, ասոցացված անդամ.**

1) Վրաստանը
2) Ուզբեկստանը
3) Թուրքմենստանը
4) Մոլդովան

**31** **Ո՞րը Իվան IV Ահեղի գործունեության հետևանքներից չէ.**

1) Կառավարման համապետական մարմինների՝ պրիկազների ստեղծումը:
2) Կոստանդնուպոլսի պատրիարքին ենթակա միտրոպոլիտության փոխարեն պատրիարքության ստեղծումը:
3) Նահանգներում գործադիր և դատական իշխանությունների տարաջատումը:
4) Դասային ներկայացուցչական առաջին ժողովի՝ երկրային ժողովի հրավիրումը:

**32** **Ո՞րն է Ջոսեր փարավոնի կառավարման գլխավոր հետևանքը.**

1) Եգիպտոսի թագավորությունը նվաճվեց լիբիացիների կողմից:
2) Եգիպտոսը դուրս եկավ Քուշի տիրապետության տակից:
3) Ստորին Եգիպտոսն առանձնացավ՝ կազմելով ինքնուրույն թագավորություն:
4) Ստեղծվեց կառավարման կուռ համակարգ և ամրապնդվեց միացյալ Եգիպտոսի թագավորությունը:

**33** **Աքեմենյան տերության զահակալների անունները դասավորել ըստ նրանց զահակալման հաջորդականության.**

ա. Արտաքսերքսես III
բ. Քսերքսես I
գ. Դարեհ I
դ. Կամբիզ

1) դ, գ, բ, ա
2) բ, գ, դ, ա
3) գ, դ, ա, բ
4) դ, գ, ա, բ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գերմանական կայսրության սահմանադրության հաստատումը Ռայխստագի կողմից
բ. Սրբազան հռոմեական կայսրության վերացումը
գ. Ռազմական բարեփոխման արդյունքում Ավստրիայի ջախջախումը Պրուսիայի կողմից
դ. Պրուսիայի թագավորի կողմից Օտտո Բիսմարկի նշանակումը առաջին նախարար

1) բ, ա, գ, դ
2) ա, բ, դ, գ
3) բ, դ, գ, ա
4) դ, գ, ա, բ

**35** **Ե՞րբ է ստորագրվել այն պայմանագիրը, որից մեջբերված են հետևյալ խոսքերը.**

**«ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն դադարեցնում է իր գոյությունը»:**

1) 1991 թ. դեկտեմբերի 8-ին
2) 1991 թ. դեկտեմբերի 18-ին
3) 1991 թ. դեկտեմբերի 21-ին
4) 1991 թ. դեկտեմբերի 25-ին

**36** **Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը.**

«Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

1) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանում ընդունված 637-րդ բանաձևից
2) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ նստաշրջանում ընդունված 1514-րդ բանաձևից
3) Բելովեժյան անտառ-արգելանոցում կքված համաձայնագրից
4) Հելսինկիի եզրափակիչ ակտի 10 սկզբունքներից

**37** **XVI դարի պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

| | |
|---|---|
| 1. Վորմս քաղաքում Ռայխստագի հրավիրումը Կարլոս V կայսեր կողմից | ա. 1534 թ. |
| | բ. 1517 թ. |
| 2. «Գերագահության մասին ակտի» ստորագրումը Հենրիխ VIII թագավորի կողմից | գ. 1598 թ. |
| | դ. 1592 թ. |
| 3. Նանտի էդիկտի հրատարակումը Հենրիխ IV-ի կողմից | ե. 1521 թ. |
| 4. Ռեֆորմացիայի սկիզբը Գերմանիայի Վիտենբերգ քաղաքից | |

1) 1–բ, 2–ե, 3–գ, 4–դ
2) 1–բ, 2–ա, 3–դ, 4–ե
3) 1–ե, 2–ա, 3–գ, 4–բ
4) 1–ա, 2–ե, 3–բ, 4–գ

**38** **Տարեթվերը համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.**

| | |
|---|---|
| 1. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» հաստատումը Ֆրանսիայում | ա. 1792 թ. |
| | բ. 1789 թ. |
| 2. Առաջին հանրապետության շրջանի ավարտը Ֆրանսիայում | գ. 1801 թ. |
| 3. Սահմանադիր ժողովի կողմից Ֆրանսիայի առաջին սահմանադրության հաստատումը | դ. 1791 թ. |
| | ե. 1804 թ. |
| 4. Ազգային կոնվենտի կողմից միապետության վերացումը և հանրապետության հռչակումը Ֆրանսիայում | |

1) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ
2) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
3) 1–ե, 2–բ, 3–գ, 4–ա
4) 1–բ, 2–ե, 3–դ, 4–ա

**39** **Ո՞ր կայսեր բարեփոխումների արդյունքում Նիկոմեդիան դարձավ Հռոմեական կայսրության արևելյան կենտրոն.**

1) Դիոկղետիանոս
2) Մաքսիմիանոս
3) Կոստանդիանոս
4) Հադրիանոս

**40** **Սենատոր Մաքքարթիի հանձնաժողովի ցուցումով քանի հազար մարդ ազատվեց աշխատանքից իբրև «անվստահելի տարր».**

1) մոտ 7000
2) մոտ 9000
3) մոտ 12000
4) մոտ 13000

**41** **Ո՞րն է Օտտոն I-ի բարեփոխումների հետևանքներից.**

1) Դատավորը դարձավ ընտրովի պաշտոնյա և ենթարկվեց կոմսին:
2) Զինվորական ծառայությունը դարձավ ավատատերերի դասակարգի արտոնությունը:
3) Եկեղեցին դարձավ գործադիր իշխանություն իրականացնող մարմին:
4) Բռնազավթվեց անհնազանդ հողատերերին պատկանող հողերի մի մասը:

42 **Ո՞րն էր 1884 թ. Անգլիայում հաստատված ընտրական երրորդ բարեփոխման օրենքի նախագծի գլխավոր հետևանքը.**

1) Հաստատվեց տղամարդկանց համընդհանուր ընտրական իրավունք:
2) Հաստատվեց ամբողջ բնակչության համընդհանուր ընտրական իրավունք:
3) Ընտրական իրավունք ստացան 28 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիները:
4) Խորհրդարանի ընտրողների թիվը նախորդ բարեփոխումների համեմատությամբ երկու անգամ աճեց և հասավ միլիոնների:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դեկաբրիստների ապստամբությունը
բ. Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
գ. «Ազատ ձեռներեցության մասին օրենքի» ընդունումը Ռուսաստանում
դ. Նարոդնիկների կազմակերպած «Երթ դեպի ժողովուրդ» միջոցառման ձախողումը

1) գ, ա, բ, դ
2) ա, գ, բ, դ
3) գ, ա, դ, բ
4) ա, գ, դ, բ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սուասոն քաղաքի ճակատամարտը
բ. Կատալաունյան դաշտի ճակատամարտը
գ. Նիկեայի ժողովը
դ. Գոթերի հաղթանակը կայսերական զորքերի դեմ Ադրիանապոլսի ճակատամարտում
ե. Բյուզանդիոն քաղաքի մայրաքաղաք հռչակումը

1) դ, գ, ե, ա, բ
2) դ, ե, գ, բ, ա
3) ե, դ, գ, բ, ա
4) գ, ե, դ, ա, բ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կոստանդնուպոլիս քաղաքի գրավումը օսմանյան թուրքերի կողմից
բ. Անկարայի ճակատամարտում թուրքերի պարտությունը Լենկ Թեմուրի զորքերից
գ. Բրուսա բերդաքաղաքի գրավումը օսմանյան թուրքերի կողմից
դ. Թավրիզի գրավումը ղզլբաշների առաջնորդ Իսմայիլի զորքերի կողմից
ե. Ադրիանապոլիս քաղաքի գրավումը Մուրադ I-ի կողմից

1) գ, ե, բ, ա. դ
2) ե, բ, գ, դ, ա
3) բ, ե, գ, ա, դ
4) գ, բ, ե, դ, ա

46 **Գահակալների անունները համապատասխանեցնել երկրների անվանումներին.**

1. Թուկուլթի - Նինուրտա I
2. Սուպիլուլիումաս I
3. Դոմետիանոս
4. Արտաքսերքսես III
5. Նաբուգոդոնոսոր II

ա. Խեթական պետություն
բ. Աքեմենյան տերություն
գ. Ասորեստան
դ. Նոր Բաբելոնիա
ե. Եգիպտոս
զ. Հռոմեական կայսրություն

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-զ
2) 1-գ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-դ
3) 1-ա, 2-գ, 3-զ, 4-բ, 5-ե
4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ

47 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել փարավոնների անուններին.**

1. Հյուսիսում Եգիպտոսի սահմանների ընդարձակումը մինչև Կարքեմիշ
2. Աթոն աստծո հռչակումը Եգիպտոսի միակ աստված
3. Ավարիսի գրավումը և հյուքսոսների վտարումը
4. Աբու-Սիմբելի ժայռակերտ տաճարի կառուցումը

ա. Յահմոս I
բ. Թութմոս III
գ. Թութմոս I
դ. Ամենհոտեպ IV
ե. Ռամզես II

1) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե
3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե

48 **Իրադարձությունները համապատասխանեցնել տեղանուններին.**

1. Գերմանական կայսրության հռչակումը
2. Օտտոն I-ի կայսր թագադրվելը
3. Սիմոն դը Մոնֆորի կողմից ժողովի հրավիրումը
4. Պիպին Կարճահասակի թագավոր հռչակվելը
5. Հենրիխ IV կայսրի և Գրիգորիոս VII պապի հանդիպումը

ա. Սուասոն
բ. Կանոսա
գ. Վերսալ
դ. Փարիզ
ե. Հռոմ
զ. Լոնդոն

1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-բ
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե
3) 1-զ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-բ
4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-բ, 5-գ

**49** **Հռոմեական կայսրության գահակալների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարեթվերին.**

1. Մարկոս Ավրելիոս
2. Դիոկղետիանոս
3. Տրայանոս
4. Կլավդիոս
5. Վեսպասիանոս

ա. 69 -79 թթ.
բ. 41 - 54 թթ.
գ. 161 - 180 թթ.
դ. 117 - 154 թթ.
ե. 284 - 305 թթ.
զ. 98 - 117 թթ.

1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-ա
2) 1-դ, 2-գ, 3-զ, 4-բ, 5-ե
3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-զ, 5-ա
4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե

**50** **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել երկրների անվանումներին.**

1. Ջորջ Բայրոն
2. Օգյուստ Ռոդեն
3. Նիկոլո Պագանինի
4. Ռիխարդ Վագներ
5. Ֆրանց Շուբերտ
6. Մարկ Տվեն

ա. Իտալիա
բ. Գերմանիա
գ. Անգլիա
դ. Ավստրիա
ե. ԱՄՆ
զ. Ֆրանսիա
է. Հոլանդիա

1) 1–դ, 2–բ, 3–է, 4–ա, 5–զ, 6–ե
2) 1–գ, 2–զ, 3–ա, 4–բ, 5–դ, 6–ե
3) 1–գ, 2–է, 3–ա, 4–բ, 5–ե, 6–դ
4) 1–ե, 2–զ, 3–է, 4–գ, 5–դ, 6–բ

**51** **Վաշինգտոնի խորհրդաժողովի վերաբերյալ նշված փաստարկներից ո՞րն է սխալ.**

1) Չինաստանում վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները:
2) Ամրագրվում էր Չինաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:
3) Չինաստանում, Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում մեծ տերությունների համար հռչակվում էր «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:
4) Համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմերի միջև չափաբաժինները Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

**52** **Ենիչերիների կորպուսի վերաբերյալ նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Ենիչերիների գոյության միակ միջոցը պատերազմն ու թալանն էր:
2) Ենիչերիները ընտանիք չունեին, ապրում էին զորանոցներում:
3) Ենիչերիների կորպուսը հիմնականում հավաքագրվում էր քրիստոնյա ընտանիքներից:
4) Ենիչերիների կորպուսում մեծ թիվ էին կազմում քրդերը և թյուրք-սելջուկները:

**53** **Միջազգային կառույցների վերաբերյալ բերված փաստերից ո՞րն է սխալ.**

1) 1949 թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնում 12 երկրներ ստորագրեցին Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը:
2) 1992 թ. մարտի 15-ին Հայաստանը, Ղազախստանը, Բելոռուսը, Ուկրաինան, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը Տաշքենդում ստորագրեցին Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագիրը:
3) ԳԴՀ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Նիդերլանդները և Լյուքսեմբուրգը 1957 թ. ստորագրեցին Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) ստեղծման վերաբերյալ պայմանագիրը:
4) ՄԱԿ-ի կանոնադրությունն ուժի մեջ է մտել 1945 թ. հոկտեմբերի 24-ին:

**54** **Ի՞նչ էին կոչվում Անգլիայում կանանց ընտրական իրավունք տալու պայքարի մասնակից կանայք.**

1) ընտրամարտուհի
2) բարեփոխուհի
3) ընտրողուհի
4) ընտրամասնակցուհի

**55** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

| | | | |
|---|---|---|---|
| 1. | ուլուս | ա. | պայմանական հողատիրույթ Հին Ռուսիայում |
| 2. | սավաֆի | բ. | Ալ. Մակեդոնացու տերության ժառանգորդ |
| 3. | սանջակ | գ. | հարկահավաքման ձև Հին Ռուսիայում |
| 4. | սատրապություն | դ. | վարչական շրջան Աքեմենյան Պարսկաստանում |
| 5. | դիադոխ | ե. | փոխարքայություն մոնղոլական կայսրությունում |
| 6. | պոլյուդիե | զ. | կառավարող տոհմին պատկանող հողերը Արաբական խալիֆայությունում |
| | | է. | վարչական շրջան Օսմանյան կայսրությունում |

1) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
2) 1-ե, 2-զ, 3-է, 4-դ, 5-բ, 6-գ
3) 1-գ, 2-զ, 3-է, 4-դ, 5-բ, 6-ա
4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-է, 5-ա, 6-զ

**56** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. էվպատրիդ
2. իկթա
3. օստրակիզմ
4. ապարտեիդ
5. դոմինատ

ա. ծառայության դիմաց տրվող հողերը Արաբական խալիֆայությունում
բ. վարչակարգ, որին բնորոշ են ռասսայական խտրականության ծայրահեղ դրսևորումները
գ. պետության համար վտանգ ներկայացնող քաղաքացիների վտարման կարգ Ատտիկայում
դ. կառավարման համակարգ Հռոմեական ուշ կայսրության դարաշրջանում
ե. տոհմային ավագանու ներկայացուցիչ Հին Աթենքում

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-գ, 5-բ
3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ, 5-դ
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-ե

**57** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Մինա փարավոնի կողմից միասնական պետության ստեղծման հետևանքներ.**

ա. Նեղոսի դելտայի արևելքում հիմնվեց նոր մայրաքաղաք Ավարիսը:
բ. Աթոնը հռչակվեց Եգիպտոսի միակ աստված:
գ. Նեղոսի դելտայի շրջանում կառուցվեց Մեմֆիս մայրաքաղաքը:
դ. Անցկացվեցին կրոնական բարեփոխումներ, որոնք սահմանափակում էին Ամոնի տաճարի քրմության իրավունքները:
ե. Կազմակերպվեցին առաջին ռազմական արշավանքները դեպի Սինայի թերակղզի, Լիբիա և Նուբիա:
զ. Թուլացավ Եգիպտոսի ազդեցությունը Արևելամիջերկրածովյան ավազանում:
է. Դադարեցին նոմերի միջև պատերազմները, վերականգնվեց տնտեսությունը:

1) ա, գ, ե
2) ե, զ, է
3) բ, գ, դ
4) գ, ե, է

58 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Եվրոպայում բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառ.**

ա. Ազնվականության դերի բարձրացումը:
բ. Եկեղեցու շուրջ մտավորական խավի համախմբումը:
գ. Իսլամական աշխարհից Եվրոպային մշտապես սպառնացող վտանգը:
դ. Ռեֆորմացիայի և աշխարհիկ մտավորական խավի առաջացման հետևանքով հոգևորականության կանխման մեջ հայտնվելը միապետից:
ե. Միապետի շուրջ առևտրականների և արդյունաբերողների համախմբումը և նրա գլխավորությամբ իշխանության կենտրոնացումը մի խումբ մարդկանց ձեռքում:
զ. Որպես ռազմաքաղաքական խավ ազնվականության դերի կորուստը և ենթարկումը միապետի կամքին:
է. Կաթոլիկ եկեղեցու դիրքերի թուլացումը, եկեղեցու ենթարկումը պետությանը:

1) բ, գ, դ, ե
2) ա, գ, զ, է
3) ա, դ, ե, զ
4) դ, ե, զ, է

59 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հետպատերազմյան աշխարհում հանդիսանում են Վերսալ-վաշինգտոնյան համակարգի հետևանքներ.**

ա. Միջազգային հարաբերությունների սկզբունքների նորացումը (ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչում և կիրառում, հրաժարում պատերազմից՝ իբրև հակամարտությունների կարգավորման միջոցի):
բ. Գաղութային համակարգի վերացումը:
գ. Միջազգային նոր կազմակերպությունների ու կառույցների ստեղծումը:
դ. Կախյալ տարածքների կառավարման նոր՝ մանդատային համակարգի ստեղծումը:
ե. Պատերազմի մասնակից երկրներում «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքի հռչակումը:
զ. Հետպատերազմյան լարվածության թուլացումը և 1920 - ական թթ. «բարգավաճման ժամանակաշրջանի» գերիշխումը:
է. Միջազգային հարաբերություններում հավասարակշռության ստեղծումը:

1) ա, դ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, գ, զ, է
4) գ, դ, զ, է

**60** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մակեդոնիայի, Էպիրոսի և Հոնիական կղզիների միավորումը, Մակեդոնիա պրովինցիայի ստեղծումը
բ. Մագնեսիայի ճակատամարտը
գ. Կորնթոսի գրավումը և նրա ողջ բնակչության ստրկության վաճառքը հռոմեացիների կողմից
դ. Կինոսկեֆալեի ճակատամարտը
ե. Հռոմի քաղաքացիներին հավասար իրավունքներ ունենալու համար իտալիկների ապստամբությունը
զ. Պերսևսի պարտությունը, Էպիրոսի գրավումը հռոմեացիների կողմից

1) դ, բ, զ, ա, գ, ե
2) բ, զ, ա, գ, դ, ե
3) բ, գ, ե, ա, դ, զ
4) դ, բ, գ, զ, ա, ե

**61** **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա. Կարլոս Մեծ
բ. Պետրոս I
գ. Խոսրով I Անուշիրվան
դ. Հենրիխ Բուրբոն
ե. Ֆիլիպ IV Գեղեցիկ
զ. Նապոլեոն Բոնապարտ
է. Բարսեղ I
ը. Պիպին Կարճահասակ
թ. Օտտոն I
ժ. Հովհան Անհողին

1) ը, գ, ա, է, դ, թ, ե, զ, ժ, բ
2) ա, ը, գ, է, թ, ե, բ, ժ, զ, դ,
3) գ, ը, ա, թ, է, ժ, ե, դ, բ, զ
4) ը, գ, ա, թ, է, ե, ժ, բ, դ, զ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից Ֆրանսիայի դուրս գալը
բ. Եվրոխորհրդարանի ուղղակի ընտրությունների անցկացումը, Եվրոպական դատարանի հիմնումը
գ. Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) ստեղծման վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
դ. ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միավորումը
ե. Եվրոպական ընկերակցության պետությունների ղեկավարների կողմից Եվրոպական միության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
զ. Ալժիրի անկախության ճանաչումը Ֆրանսիայի կողմից
է. Շառլ դը Գոլի հրաժարականը
ը. ՄԱԿ-ի շրջանակներում գործող Միջազգային դատարանի գործունեության սկիզբը
թ. Բեռլինի պատի փլուզումը
ժ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության ստեղծումը

1) ը, ժ, գ, զ, ա, է, բ, թ, դ, ե
2) ժ, ը, գ, ե, ա, է, թ, բ, դ, զ
3) գ, ը, բ, ժ, զ, ա, ե, է, թ, դ
4) զ, ժ, ը, է, գ, ա, թ, դ, ե, բ

63 **Լրացնել ԱՄՆ նախագահ Ք. Քուլիջի խոսքերը.**

«Նա, ով կառուցում է ... , տաճար է կառուցում»:

1) դպրոց
2) գործարան
3) գրադարան
4) տուն

64 **Քաղաքական ո՞ր գործչին է պատկանում հետևյալ արտահայտությունը.**

«Կապիտալիզմի գլխավոր թերությունը բարիքների անհավասար բաշխումն է, իսկ սոցիալիզմի գլխավոր առավելությունը՝ զրկանքների հավասար բաշխումը»:

1) Շառլ դը Գոլ
2) Ջոն Քենեդի
3) Մարգարետ Թետչեր
4) Ուինսթոն Չերչիլ

65 **Տարեթվերը համապատասխանեցնել երկրորդ աշխարհամարտի իրադարձություններին.**

1. Ճապոնիայի անվերապահ անձնատվության փաստաթղթի ստորագրումը
2. Յալթայի խորհրդաժողովի սկիզբը
3. Ճապոնական Նագասակի քաղաքի ատոմային ռմբահարումը
4. Անգլո-ամերիկյան զորքերի մուտքը Նորմանդիա
5. Նյուրնբերգում միջազգային դատական ատյանի գործունեության սկիզբը

ա. 1944 թ. հունիս
բ. 1945 թ. սեպտեմբեր
գ. 1945 թ. օգոստոս
դ. 1945 թ. փետրվար
ե. 1945 թ. հոկտեմբեր
զ. 1945 թ. նոյեմբեր

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-զ
2) 1-ե, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-զ, 5-ե
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-զ

66 **Կատարել համապատասխանեցում.**

| N | Ստեղծագործություն | N | Հեղինակ | N | Տարեթիվ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Խորհրդավոր ընթրիք» | 1 | Միքելանջելո Բուոնարոտի | 1 | 1577-1640 թթ. |
| 2 | «Անառակ որդու վերադարձը» | 2 | Ռաֆայել Սանտի | 2 | 1475-1564 թթ. |
| 3 | «Սիքստինյան Տիրամայրը» | 3 | Լեոնարդո դա Վինչի | 3 | 1483-1520 թթ. |
| 4 | «Դավիթ» | 4 | Ռուբենս | 4 | 1606-1669 թթ. |
| | | 5 | Ռեմբրանդտ | 5 | 1452-1519 թթ. |

1

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 5 | 3 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 1 | 5 |

2

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 1 |
| 2 | 2 | 3 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 4 | 5 |

3

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 5 | 4 |
| 3 | 2 | 3 |
| 4 | 1 | 2 |

4

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 4 | 2 |
| 3 | 5 | 3 |
| 4 | 1 | 1 |

**67** **Նշված հատկանիշներից ընտրել չորսը, որոնք բնորոշ են ազատական վարչակարգերին.**

ա. Իշխանության տարանջատումն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի:
բ. Համընդհանուր վերահսկողություն հասարակության, այդ թվում՝ անհատի կենսագործունեության նկատմամբ:
գ. Մամուլի ազատությունը և գրաքննության բացակայությունը:
դ. Պետական և կուսակցական մարմինների միաձուլումը:
ե. Տնտեսության կենտրոնացված կառավարումը:
զ. Կրոնի և հավատքի հանդեպ հանդուրժողականությունը:
է. Շուկայական տնտեսությունը և բաց սոցիալ - տնտեսական համակարգը:

1) ա, բ, դ, է
2) ա, գ, զ, է
3) բ, դ, զ, է
4) գ, դ, ե, զ

**68** **Նշված պնդումներից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Վորմսի համաձայնագրին.**

ա. Գերմանիայում եպիսկոպոսը կամ վանահայրը ընտրվելու էին հոգևորականների ժողովում, որին աշխարհականներից մասնակցելու էր միայն կայսրը, կամ նրա ներկայացուցիչը:
բ. Իտալիայում եպիսկոպոսի կամ վանահոր ընտրությունը տեղի էր ունենալու առանց աշխարհիկ անձի ներկայության:
գ. Բուրգունդիայում եպիսկոպոսի կամ վանահոր ընտրությունը միանձնյա կատարելու էր կայսրը:
դ. Գերմանիայում եպիսկոպոսի կամ վանահոր ընտրությունից հետո կատարվելու էր աշխարհիկ և հոգևոր ինվեստիտուրա:
ե. Գերմանիայում հոգևոր ինվեստիտուրայի ժամանակ կայսրը եպիսկոպոսին կամ վանահորը հանձնում էր թագ, մատանի, վարդապետական խույր:
զ. Գերմանիայում աշխարհիկ ինվեստիտուրայի ժամանակ կայսրը ընտրված եպիսկոպոսին կամ վանահորը հանձնում էր գայիսոնը:

1) ա, բ, դ, զ
2) բ, դ, ե, զ
3) բ, գ, դ, ե
4) գ, դ, ե, զ

69 **Նշված փաստերից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Ռեզա խանի բարեփոխումներին.**

ա. Արաբական այբուբենը փոխարինվեց լատինականով:
բ. Կազմակերպվեց Իրանի ազգային բանկը:
գ. Կանանց արգելվեց չադրա կրելը:
դ. Ամենուրեք ստեղծվեցին «կանանց իրավունքների պաշտպանության» կազմակերպություններ:
ե. Բացվեց Կասպից ծովը Պարսից ծոցի հետ կապող երկաթուղային ճանապարհը:
զ. Փակվեցին հոգևոր դպրոցները:
է. Վերացվեցին ազնվականների ավանդական տիտղոսները, փոխարենը ներդրվեցին սովորական ազգանուններ:

1) գ, դ, ե, է
2) բ, գ, դ, ե
3) ա, բ, զ, է
4) բ, գ, ե, է

70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

| | |
|---|---|
| 1. իմպրեսիոնիզմ | ա. մեղքերի թողության թուղթ |
| 2. ինվեստիտուրա | բ. արվեստի ուղղություն |
| 3. ինդուլգենցիա | գ. հերետիկոսական գաղափարների հավատաքննության դատարան |
| 4. ինկվիզիցիա | դ. սենյորի կողմից ավատի հանձնումը վասալին |
| 5. ինդուստրացում | ե. պատերազմում պարտված երկրների կողմից կատարվող դրամական վճարում |
| 6. ինտերվենցիա | զ. արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում մեքենայական արտադրության ներդրման գործընթաց |
| | է. զինված ներխուժում |

1) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-դ, 6-է
2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-է, 6-զ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ, 6-է
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-զ, 6-դ

**71** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պրինցիպատ
2. բուլե
3. տիրանիա
4. գերուսիա
5. ապելլա
6. տրիտիան

ա. ավագների խորհուրդ Հին Սպարտայում
բ. ժողովրդական ժողովի կողմից ընտրված 400-ի խորհուրդ Աթենքում
գ. Հռոմեական վաղ կայրության անվանում
դ. ժողովրդական ժողովը Աթենքում
ե. գերագույն օրենսդիր մարմին՝ ժողովրդական ժողովը Սպարտայում
զ. միանձնյա կառավարման ժամանակավոր եղանակ Հին Հունաստանում
է. վարչական շրջանի մաս Աթենքում

1) 1-գ, 2-դ, 3-է, 4-ա, 5-ե, 6-զ
2) 1-գ, 2-բ, 3-է, 4-ե, 5-ա, 6-զ
3) 1-է, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ, 6-գ
4) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-ե, 6-է

**72** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. դուչե
2. մեջլիս
3. ռայխստագ
4. դոկտրինա
5. անեքսիա
6. ռայխկանցլեր

ա. իտալական ֆաշիզմի առաջնորդ
բ. Ազգային ժողով Թուրքիայում
գ. բռնազավթում
դ. քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ
ե. Խորհրդարան Գերմանիայում
զ. հարձակում
է. վարչապետ Գերմանիայում

1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-է
2) 1-ա, 2-է, 3-բ, 4-դ, 5-գ, 6-զ
3) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ, 6-է
4) 1-դ, 2-բ, 3-ե, 4-զ, 5-ա, 6-զ

73 **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանքներ.**

ա. Գերմանիան և Ավստրո-Հունգարիան պարտավորվում էին փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
բ. Արևմտյան Հայաստանի հետ միասին Օսմանյան Թուրքիային էին տրվում նաև Կարսն ու Արդահանը:
գ. Արևմտյան Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի հովանու ներքո ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:
դ. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր հանել զորքերը Մակեդոնիայից և Պաղեստինից:
ե. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից:
զ. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկե մարկ ռազմատուգանք:
է. Օսմանյան Թուրքիան իրեն պարտված էր ճանաչում, Կ.Պոլիսը անցնում էր դաշնակիցների վերահսկողության տակ:
ը. Արևմտյան Հայաստանում ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:
թ. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել զաղտնի բանակցությունները Մեծ Բրիտանիայի հետ:

1) բ, ե, զ
2) ա, գ, է
3) բ, դ, ը
4) ե, զ, թ

74 **Նշված փաստարկներից ընտրել չորսը որոնք հանդիսանում են ԽՍՀՄ փլուզման հետևանքներ.**

ա. Հնարավոր դարձավ ավելի զորեղ ու հաստատուն Եվրամիության ստեղծումը:
բ. Ստեղծվեց ԱՊՀ-ն:
գ. Ակտիվացավ քաղաքական իսլամը. որոշ իսլամական երկրներ կրկին ակտիվացրին կրոնական գաղափարախոսությունը՝ այն օգտագործելով քաղաքական նպատակներով:
դ. Ստեղծվեց Ինքնիշխան պետությունների Միությունը (ԻՊՄ):
ե. Մեծ ծավալ ընդունեց մտավոր ներուժի («ուղեղների ներհոսք») ներգաղթը:
զ. Աշխարհի քարտեզին հայտնվեցին 15 նորանկախ երկրներ:
է. Ռուսաստանի և Ղազախստանի գլխավորությամբ ստեղծվեց Արտակարգ իրադրության պետական կոմիտեն (ԱԻՊԿ)
ը. Ընդունվեց ինքնավար մարզերի պետական սուվերենության միասնական հռչակագիրը:
թ. Ավարտվեցին սառը պատերազմի ընթացքում Արևմտյան Եվրոպայում սկսված մի շարք պատերազմներ:
ժ. Դադարեց գոյություն ունենալուց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):

1) ա, բ, գ, զ
2) բ, գ, թ, է
3) գ, դ, ե, զ
4) ա, դ, ը, ժ

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բարենորոգումների նոր փուլի՝ Թանզիմաթի հայտարարումը
բ. Բուլղարների խոշոր ապստամբության սկիզբը Օսմանյան կայսրությունում
գ. Առաջին օսմանյան խորհրդարանի գումարումը
դ. Մեհմեդ Ռեշադ V-ի գահ բարձրանալը
ե. Երիտթուրքերի ապստամբությունը
զ. Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը
է. Ղրիմի պատերազմի սկիզբը
ը. Միանձնյա կառավարման համակարգի հաստատումը Համիդ II-ի կողմից
թ. Օսմանյան բանակի ենիչերական ստորաբաժանումների վերացումը
ժ. Հայ ժողովրդի զանգվածային կոտորածները Աբդուլ Համիդ II-ի օրոք

1) ա, թ, բ, գ, է, ը, ժ, ե, զ, դ
2) թ, ա, է, գ, բ, ը, ժ, դ, ե, զ
3) ա, թ, է, ը, բ, գ, ե, ժ, զ, դ
4) թ, ա, է, բ, գ, ը, ժ, ե, դ, զ

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի (ՀԱՊ) ստորագրումը
բ. Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը
գ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը (ՆԱՏՕ)
դ. ԽՍՀՄ-ի փոխարեն Ինքնիշխան պետությունների միության ստեղծումը
ե. Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ որոշման կայացումը ՀԱՊԿ նախագահների կողմից
զ. Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը
է. Կոսովոյի անկախության ճանաչումը
ը. Ուոթրգեյթյան գործը
թ. Ֆոլկլենդյան պատերազմը
ժ. Կարիբյան ճգնաժամը

1) բ, գ, ժ, ը, թ, դ, զ, ա, է, ե
2) բ, գ, ը, ժ, թ, զ, դ, ա, է, ե
3) գ, բ, թ, ժ, ը, դ, ե, ա, զ, է
4) գ, ժ, բ, թ, ը, ա, զ, դ, ե, է

77 **Կատարել համապատասխանեցում.**

| N | Մշակույթի գործիչ | N | Երկիր | N | Մշակույթի ուղղություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գ.Կուրբե | 1 | Գերմանիա | 1 | ռոմանտիզմ |
| 2 | Է.Նոլդիե | 2 | Անգլիա | 2 | նատուրալիզմ |
| 3 | Վ.Սքոթ | 3 | Իտալիա | 3 | էքսպրեսիոնիզմ |
| 4 | Ջ. Վերդի | 4 | Ֆրանսիա | 4 | սիմվոլիզմ |
| | | 5 | ԱՄՆ | 5 | ռեալիզմ |

1

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 4 |
| 2 | 4 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 3 | 5 |

2

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 3 | 5 |

3

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 2 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 3 | 4 |

4

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 4 | 2 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 1 | 5 |

78 **Տարեթվերը համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.**

1. 1861 թ.
2. 1871 թ.
3. 1868 թ.
4. 1848 թ.
5. 1867 թ.

ա. Հռոմի հռչակումը Իտալիայի մայրաքաղաք
բ. Ավստրո-Հունգարիա պետության ստեղծումը
գ. Սարդինիայի արքայական հատուկ օրենքով Իտալական թագավորության սահմանադրության հաստատումը
դ. «Ազգերի իրավահավասարության» մասին օրենքի ընդունումը Հունգարիայի խորհրդարանում
ե. Անբերրիության տարիները Ավստրիական կայսրությունում
զ. Իտալիայի հռչակումը թագավորություն

1) 1-ա, 2-զ, 3-ե, 4-բ, 5-դ
2) 1-ա, 2-զ, 3-դ, 4-գ, 5-բ
3) 1-զ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-բ
4) 1-զ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-դ

79 Կատարել համապատասխանեցում.

| N | Գործիչ | N | Վայր | N | Տարեթիվ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ի.Ստալին, Հ.Թրուման, Կ.Էտլի | 1 | Փարիզ | 1 | 1938 թ. |
| 2 | Չեմբեռլեն,Դալադիե, Հիտլեր, Մուսոլինի | 2 | Թեհրան | 2 | 1922 թ. |
| 3 | Ժ.Կլեմանսո, Լ.Ջորջ, Վ.Վիլսոն, Օռլանդո, Սայոնի | 3 | Մյունխեն | 3 | 1945 թ. |
| 4 | Ֆ.Ռուզվելտ, Ու, Չերչիլ Ի.Ստալին | 4 | Լոնդոն | 4 | 1919 թ. |
| | | 5 | Պոտսդամ | 5 | 1943 թ. |

1

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 1 |
| 2 | 4 | 2 |
| 3 | 3 | 4 |
| 4 | 2 | 3 |

2

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 2 |
| 2 | 5 | 3 |
| 3 | 3 | 1 |
| 4 | 4 | 5 |

3

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 5 |

4

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 4 | 5 |
| 4 | 2 | 4 |

80 Կատարել համապատասխանեցում.

| N | Տարեթիվ | N | Գործիչ | N | Պաշտոն | N | Իրադարձություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1189-1192 թթ. | 1 | Գոթֆրիդ Բույլոնցի | 1 | Անգլիայի թագավոր | 1 | Եկեղեցական ժողովի հրավիրումը |
| 2 | 1144 թ. | 2 | Ռիչարդ I Առյուծասիրտ | 2 | Եգիպտոսի սուլթան | 2 | Եդեսիա քաղաքի գրավումը |
| 3 | 1187 թ. | 3 | Զանգի | 3 | Մոսուլի կառավարիչ | 3 | Կիպրոս կղզու գրավումը, Կիպրոսի թագավորության ստեղծումը |
| 4 | 1095 թ. | 4 | Սալահ ադ Դին | 4 | Հռոմի պապ | 4 | Իկոնիա քաղաքի գրավումը |
| | | 5 | Ուրբանոս II | 5 | Ֆրանսիայի թագավոր | 5 | Ակրայի, Բեյրութի, Երուսաղեմի գրավումը |

1

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 5 | 4 |
| 2 | 5 | 4 | 3 |
| 3 | 1 | 1 | 5 |
| 4 | 3 | 3 | 2 |

2

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 1 |
| 2 | 2 | 1 | 2 |
| 3 | 1 | 5 | 4 |
| 4 | 5 | 4 | 3 |

3

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 5 | 3 |
| 2 | 3 | 3 | 4 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 5 | 4 | 2 |

4

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 1 | 3 |
| 2 | 3 | 3 | 2 |
| 3 | 4 | 2 | 5 |
| 4 | 5 | 4 | 1 |